





# ԼԵՒՈՆ Ե ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՎԵՐՁԻՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ



## Ա

Կեղեսիկեանց Եկեղեցին



SUR CET EMPLACEMENT  
S'ÉLEVAIENT  
LE COUVENT ET L'ÉGLISE DES CÉLESTINS  
FONDÉS PAR CHARLES V EN 1365

յս արձանագրութիւնը կը կրէ այսօր Կեղեսիկեանց զօրանոց (Caserne des Célestins) կոչուած այն ընդարձակ նոր զօրանոցը՝ որ կը գտնուի Պարիսի մէջ, Սիւլլի կամըջին մօտ, տարածուելով Բուլվար Հանրի Դ-է մինչեւ Սիւլլի փողոց, ուր եռանկիւն մը կը կազմէ : Այս անկիւնէն սկսեալ գետտին ալ՝ Կեղեսիկեանց գետտի (Quai des Célestins) անունը կստանայ, ի յիշատակ այն նշանաւոր եւ յիշատակներով լի վանքին ու եկեղեցիին, որոնց հետքերը գեւ երեք տարի առաջ՝ կը նշմարուէին նորաշէն զօրանոցիս դիմացի կողմը, պատերու վրայ եւ այլուր, հին քանդակներու մնացորդներով :

Այստեղ կը գտնուէր ուրեմն Երկնայնոց կամ Կեղեսիկեան կրօնաւորներու վանքը, — թէ եւ վանքին ընդարձակութիւնը կը բռնէր հարաւէն յիշեալ Սիւլլի փողոցը, հիւսիսէն Սրբղէ փո-